

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԳՈՒՐԳԵՆ ԱԲԵՂԱ ԱՂԱԲԱԲՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, սիրելի եղբայրներ և քույրեր.

Հոգևոր դաստիարակության և ուսումնառության շրջանից հետո, կամոքն Աստուծո և հայրական խնամակալությամբն ազգիս Հայրապետի, ուղիղ 40 օր առաջ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արքազան խորանի վրա, ստացա քահանայական ձեռնադրություն իմ օծակից եղբայրների հետ՝ սրբազան ձեռամբ տիեզերական Եկեղեցվույս Քահանայապետի՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի:

Աստծո շնորհներով լցված, զորավորված կենդանի Փրկչի ավետարանական լույսով, մեր տառապած ու փրկության քառուղիներով ընթացող ազգային Եկեղեցին իր բազմադարյան, նույնքան տառապած թևերը փռեց նաև մեր՝ նորընծաներիս ուսերին՝ հավատքի սիրո այն ջերմությամբ, որ դարեր ի վեր, մեր արքազան անտրտունջ աղոթքով ու խոկմամբ, բարձրյալի՝ բարի նավապետի առաջնորդությամբ, մեր հավատքի նավն են առաջնորդել փոթորկահույզ, մրրկաբաշ օվկիանի բովից դեպի խաղաղ նավահանգիստ:

Սիրելի Քրիստոսասեր ժողովուրդ,

Իմ անդրանիկ պատարագով և անդրանիկ քարոզով ու հոգու հուզմունքով, Տիրոջ Սուրբ Սեղանի առաջ կանգնած, գոհության իմ աղոթքն եմ առաքում առ Աստված, Անդրանիկին Անդրանիկներից, որ հայրական տընօրինությամբ այսուհետ մեր ավետարանված Սուրբ Եկեղեցու վարդապետությունն եմ քարոզելու և ուսուցանելու:

Իմ հոգու աղոթքն եմ առաքում առ Աստված ազգիս հանգուցյալ Հայրապետի՝ Վազգեն Ա-ի հոգու փրկության համար, որի հայրական օրհնությամբ թևակոխեցինք ճեմարանի հարկից ներս: Նաև ճեմարանի դասախոսական կազմին՝ վերատեսչությամբ Ներսես արքեպս. Պոզապալյանի, որի հայրական հոգատարության շնորհիվ իմ օծակից եղբայրների հետ զինվորյալ ծառաներն ենք մեր Մայր Եկեղեցու:

Աղոթում եմ անդադար նաև ազգիս Հայրապետի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի համար: Իմ օծակից եղբարների հետ բախտ ունեցա դառնալու հոգևորդին Հայոց Հայրապետի, որի հայրական հոգատարության և օրհնության ներքո անցկացնելով քառասնօրյա փորձության շրջան, մկրտվեցինք հոգևոր փորձառության շնչով ի Տեր և ի Հայրապետս Հայոց:

Գոհություն ու փառաբանություն Ամենազորին, ճշմարտին ու միակ Աստծուն, Նա, որ աշխարհի մարդկության մեղքը գամեց խաչափայտին և փրկեց մարդկային հոտը կորստյան ճանապարհից:

Փառք և երկրպագություն, Ամենագութ Տեր, որ արժանի արեցիր մեզ՝ չորս օծակից եղբայրներիս, քահանայության մշտարթուն սիրո ու նվիրումի, մարտնչող մեր Եկեղեցու զինվորյալները դառնալու... և հիմա, այս պահին, Հայաստանի տարբեր եկեղեցիներից ներս, մեր ցնծության աղոթքն ենք մատուցում Քեզ՝ շաղախված միևնույն նվիրումով ու զգացումով առ Տեր, առ Եկեղեցիս Հայաստանյայց և ի Հայրապետս Ամենայն Հայոց:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Մեր անդրանիկ պատարագով և անդրանիկ քարոզով անդրանիկ հոգևոր փորձառության մկրտություն ստացանք նաև այսօր, ձեր հոգու և ձեր հավատքի առջև, զորավոր հավատքի հյուլեները մեր սրտերի ու մեր հոգու մեջ բոցավառեցին մի նոր հորիզոն, մի նոր կյանքի ճանապարհ, ճանապարհ առաքելական կոչումից ծնված նվիրում ու ծառայության ձեզ, ճանապարհը դեպի ձեզ է բերում ինձ ու իմ օծակից եղբայրներին, ճանապարհ, որ Եսայի մարգարեին տարավ, որ Հովնան մարգարեին տարավ, տարավ շատ մարգարեների ու Աստծու ծառաների, և ըստ առաջինի օրինակի, թե՝ «Ում ուղարկեմ դեպի ժողովուրդը» և ըստ պատասխանի՝ «Թե ինձ ուղարկի դեպի ժողովուրդը, Տեր»:

Մենք նույնպես՝ օծակից եղբայրներս, Տիրոջ կամքով և ազգիս Հայրապետի հայրական օրհնությամբ ու խնամակալությամբ, գալիս ենք դեպի ձեզ, գալիս ենք ավետարանական լույսի ու հույսի շողերը մեր սրտերի մեջ, գալիս ենք, որ սերմանենք ձեր մեջ Տերունական ուրախությունն անանձնական, ուրախություն, որ է փրկության ճանապարհը, Տեր Հիսուս Քրիստոսի խոսքով հաստատված և կնքված Սուրբ արյունով ու օծված, ճանապարհ, որ է ճշմարիտ կյանքի ճանապարհը, Բարձրյալի օրհնությամբ ու ողորմությամբ տրված այժմ և միշտ և հավիտյանս: Ամեն: